ՎԱՐԴԳԵՍ ՋԻՎԱՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ծնված՝ 1956 թ. հունվարի 10-ին, ՀՍՍՀ Մարտունու շրջանի (այժմ՝ Գեղարքունիքի մարզի) Երանոս գյուղում:

1959 թ. դեկտեմբերի 6-ին ընտանիքով տեղափոխվել ենք ք. Երևան՝ Նորագավիթ թաղամաս, մշտական բնակության:

Բնակության վայրը՝ ք. Երևան, Նորագավիթ 2-րդ փողոց 11/1 տուն.

Հեռախոս՝ 094 77 44 02

Ունեմ երեք զավակ՝ երկու աղջիկ, մեկ տղա և չորս թոռնիկ.

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

1963 – 1973 Երևանի №98 - №140 դպրոց, ավարտել եմ գերազանց գնահատականներով:

1973 – 1978 Երևանի Կ. Մարքսի անվան Պոլիտեխնիկական ինստիտուտի (ԵՊԻ) Տեխնիկական կիբերնետիկայի ֆակուլտետ՝ «Էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ» (ԷՀՄ) մասնագիտությամբ:

1979 – 1981 ԵՊԻ-ի Հասարակագիտական մասնագիտությունների ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժինը և ստացել եմ Ժուռնալիստի որակավորում:

Լեզուների տիրապետում. Ազատ տիրապետում եմ հայերեն և ռուսերեն լեզուներին, անգլերենին՝ բառարանով.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1978 – 1987 «ԷԼԵԿՏՐՈՆ» ԱՄ № 3 արտադրամաս՝ ինժեներ տեխնոլոգ, տեխնոլոգիական բյուրոյի պետ: Գլխավոր կոնստրուկտորի բաժին՝ առաջատար ինժեներ կոնստրուկտոր՝ ՆԱԻՐԻ 4, ՆԱԻՐԻ 4-1, ԸՀ ԷՀՄ (ЕС ЭВМ) 10 45 ԷՀՄ – ների: Ռազմական արտադրության բոլոր արտադրատեսակների և համակարգերի առաջատար մասնագետ: Արդիական թեմաներով դիպլոմային աշխատանքների ղեկավար՝ 1979 թվականին՝ 13 դիպլոմային աշխատանքների, և այդպես շարունակական... 1987 – ին՝ 28 դիպլոմային աշխատանքների ղեկավար (այն պարագայում, երբ մեկ ղեկավարի մոտ լավագույն դեպքում լինում էր չորս դիպլոմնիկներ): Մոտ տասը տարի, երեք ամսով. տարեկան 20-30 ուսանողների արտադրական պրակտիկաների ղեկավար, այդ ընթացքում, լեկցիաներ՝ էլեկտրոնային հաշվիչ մեքենաների, արդիական տեխնիկաների և տեխնոլոգիական պրոցեսների մասին և արտադրվող ռազմական տեխնիկաների վերաբերյալ:

1979 – 1983 Երևանի Հաշվիչ մեքենաների տեխնիկումի մասնագիտական քննությունների հանձնաժողովի նախագահ:

1981 թվականին մասնակցել եմ ՍՍՀՄ – ՉԵԽՈՍԼՈՎԱԿԻԱ (բազմակողմանի հարցերով լեցուն՝ կուսակցական, արդյունաբերական, երկրի ընդհանուր ճանաչողական, մշակույթային, բարեկամական և այլն...) մրցույթ-վիկտորինային, որը տևեց երկու ամիս, հաղթել եմ և արժանացել առաջին մրցանակի՝ Չեխոսլովակիա այցելելու մեկամսյա անվճար ուղեգրի: Որն ակտիվ մեկնաբանվել է նաև ՀՍՍՀ կենտրոնական մամուլում և հեռուստատեսությամբ: Հրավիրվել եմ Չեխոսլովակիա՝ 1982 թվականի գարնանը, եղել եմ Կառլովի Վարի, Բոնո, Կոշիցե, Մարյանսկի Լազնի, Բանսկա Բիստրիցա և այլ քաղաքներում, մարտի 8-ին մայրաքաղաք՝ Պրահայում էի և հյուրընկալվեցի մայրաքաղաքում ևս ութ օր:

1987 – 1988 Աշխատել եմ հաստատված թեկնածուական թեզի (CAПР) վրա, և ինքնակամ թողել:

1987 – 1995 Հայաստանի Ստանդարտացման, չափագիտության կոմիտե (ՀԱՅՊԵՍՍՏԱՆԴԱՐՏ), Ատեստավորման բաժնի Որակի կառավարման սեկտորի վարիչ: Հետագայում լաբորատորյաների լիազորագրման (հավատարմագրման) և տեսչական վերահսկողության բաժնի պետ:
Հայաստանի Հանրապետությունում ներդրել եմ՝ ISO 9000 որակի կառավարման միջազգային ստանդարտները:

1995 – 1996 Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) Կեմերովոյի մարզի Ստանդարտացման, չափագիտության, սերտիֆիկացման (Նովոկուզնեցկ քաղաքի) կենտրոնի Որակի տեսչության պետ:

1996 – 1998 ՌԴ ՊԵՍՍՏԱՆԴԱՐՏ – ի նախագահի հրամանագրով նշանակվել եմ Կեմերովոյի մարզի (Պետստանդարտի) պետ, մարզի՝ Ստանդարտացման, չափագիտության, սերտիֆիկացման (Նովոկուզնեցկ քաղաքի) կենտրոնի տնօրեն, միևնույն ժամանակ հանդիսացել եմ նաև Կեմերովոյի մարզի Ստանդարտացման, չափագիտության, սերտիֆիկացման գլխավոր պետական տեսուչ:

1995 Ըստ Ռուսաստանի Դաշնության օրենքների՝ «Որպես հրավիրված բարձրաստիճան պաշտոնյա», ինձ և իմ ընտանիքի բոլոր անդամներին քառասուն օրյա ժամկետում տրվել է Ռուսաստանի Դաշնության քաղաքացիություն և մշտական գրանցում:

1998 – 2004 ՀԱՅՊԵՍՍՏԱՆԴԱՐՏ՝ առաջատար մասնագետ:

1998 – ից Պատմա – ազգագրական, հնագիտական-տոհմագրական ստվար երեք հատորների՝ «ԵՐԱՆՈՍ» երկհատորյակի (Ա4 ֆորմատի՝ 506 էջ, և 496 էջ), «ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ» (Ա4 ֆորմատի՝ 1008 էջ, և 32 էջ գունազարդ), սպորտի՝ «Նորագավիթի սուսերամարտի սպորտդպրոցը», որի հիմքում է նաև Հայ սպորտի մեծ երախտավոր, սպորտդպրոցի հիմնադիր և տնօրեն՝ ՄԱՐՏՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ անցած ուղու, կյանքի և գործունեության մասին, «Նորագավիթի Սուրբ Գևորգ եկեղեցի», «Կոնդի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցի», «Վերին Շենգավիթի Սուրբ Սարգիս եկեղեցի», ազգատոհմերի պատմությունների՝ (Մարտունու) Գեղարքունիքի «Ումրոյ ազգատոհմը», «Վայքի Մարտիրոս գյուղի Խլղաթյան-Մաթևոսյան ազգատոհմի պատմությունը» (250 էջական), ընդհանուր առումով՝ ինքը գրքերի հեղինակ եմ:
Տպագրության եմ պատրաստում ևս վեցը գիրք, որոնք գրված են վերջին հինգից – տասներկու տարիների ընթացքում: Մամուլում շատ հոդվածների հեղինակ եմ:

2018 թ-ի դեկտեմբերի 14-ին Արարատյան Հայրապետական Թեմում հանձնել եմ դպրական քննությունները և դեկտեմբերի 21-ին, Արարատյան Հայրապետական Թեմի Առաջնորդական փոխանորդ՝ Տեր Նավասարդ Արքեպիսկոպոս Կճոյանի ձեռամբ ձեռնադրվել եմ՝ դպիր:

2023 թ-ի սեպտեմբերի 1-ից հանդիսանում եմ ՀՀ ՊՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ Էլեկտրատեխնիկական և ռադիոտեխնիկական առարկաների ամբիոնի դասախոս:

2024 թ-ի սեպտեմբերի 1-ից հանդիսանում եմ Ռուս-Հայկական համալսարանի Ինժեներա – ֆիզիկական ինստիտուտի դասախոս: